# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար ձայնագրառման համակարգերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «22» փետրվարի 2023թ.
Ժամը՝ 17:15

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան՝** Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

**Արթուր Թամրազյան՝** Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 17-րդ օրվա (20.02.2023թ.)՝ ժամը 15:00-ն,
- հայտը բացվել է էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 21.02.2023թ.՝ ժամը 15:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնման գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման գինը.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Ձայնագրառման համակարգեր | 159120000 |

**3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Մասնակցի գործունեության հասցեն |
|---|---|
| ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ | ք. Երևան, Չարենցի 37 |

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/07» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը (անունը) | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք (ՀՀ դրամ) | ԱԱՀ | Գին (ՀՀ դրամ) | Արժեք (ՀՀ դրամ) | ԱԱՀ | Գին (ՀՀ դրամ) | |
| 1 | ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ | 132600000 | 20% | 159120000 | 132600000 | 20% | 159120000 | |

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 21.02.2023թ.՝ ժամը 15:30-ին և ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

**7. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. փետրվարի 27-ին՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան